# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 546 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 13-Ի N 414-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

----------------------------------------------------------------------------------------------------

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Տեխնիկական համագործակցության և զարգացման գոր-ծակալության հայաստանյան մասնաճյուղ» առանձնացված ստորաբաժանման կողմից (ՀՎՀՀ՝ 02834561) «Սուսաննա Մայիլյան Յուրիի» անհատ ձեռնարկա-տիրոջ հետ (ՀՎՀՀ՝ 37422635) 2026 թվականի օգոստոսի 11-ին կնքված՝ N 66GMV/QOE/QOETEC/11.08.2026 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է իրավաբանական ծառայությունների մատուցում՝ 220,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, անմիջականորեն կապված է Հայաս-տանի Հանրապետության փոխվարչապետի 2026 թվականի հուլիսի 13-ի «Տեխնի-կական համագործակցության և զարգացման գործակալության հայաստանյան մասնաճյուղ» առանձնացված ստորաբաժանման կողմից իրականացվող «Շիրակի մարզի Կամո բնակավայրում խմելու ջրի հասանելիության ապահովում» ծրագրի

մասին» N 414-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

25.08.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ